13) Բաղէոս Եղանեանց. 14) Մկրտչէ Կաճկաճեան. 15) Յովհաննէս բէկ Շահնշահեանց. 16) Սեմփան Քարամեանց. իւրաքանչիւրը երկու բաժին։

1) Սահակ քահանայ Տէր Սահակեանց. 2) Մկրտիչ քահանայ Սապոնջեանց. 3) Սարգիս քահանայ Փիրվիրտեանց. 4) Յովհաննէս Մկրտչեանց. 5) Համբարձում Սոֆիանոսեանց. 6) Յակոբ մահտեսի Սարգսեան. 7) Գալուստ Թորոսեանց. 8) Սարգիս Աղատով. 9) Յարութիւն Սահակեանց. 10) Աղասի բէկ Պողոսեանց. 11) Իսահակ Լազարեանց. 12) Հայրապետ բէկ Ղարաղլանեանց. 13) Հայրապետ Վարդանեանց. 14) Կարապետ Մատթէոսեանց. 15) Բախիշ Ղազարեանց. 16) Յարութիւն Քարամեանց. 17) Նիկոլայ Վարդապետեանց. 18) Յարութիւն Տէր Եսայեանց. 19) Մարտիրոս Սարուխանեանց. 20) Բաղիշ Ջանումեանց. 21) Դաւիթ բէկ Լալայեանց. 22) Պօղոս Թարրահեանց. 23) Յովհաննէս Միրզարէկեանց. 24) Մկրտիչ Վարդանեանց. 25) Դարրիկ Նազարեանց. 26) Օհան Տէր Ստեփանեանց. 27) Եսայի Օվէանց. 28) Մանսուր Զաքարեանց. 29) Սարգիս Բաղալեանց. 30) Ղազար Սէրգէյեանց. 31) Աբրահամ Գասպարեանց. 32) Բաղիշ Տէր Վարդանեանց. 33) Սահակ Տէր Ստեփանեանց. 34) Գասպար Շահնազարեանց. 35) Մկրտիչ Ներսեսեանց. 36) Ալեքսէրտի Միրզարէկեանց. 37) Սարգիս Դանիէլեանց. 38) Մկրտիչ Սարուխանեանց. 39) Յակոբ բէկ Մարտանեանց. 40) Մեժլում Տէր Ստեփանեանց. 41) Բախիշ Սահակեանց. 42) Աբրահամ Շահվերտեանց. 43) Պետրոս Արզումանեանց. 44) Աւետիք Բալասանեանց. 45) Արզի բէկ Մարտանեանց. 46) Խաչատուր Իւղբաշեանց. 47) Աղասի Ամիրխանեանց. 48) Ջհանկիր Շահնազարեանց. 49) Բալասի Պողոսեանց. 50) Յարութիւն Բարդամեանց. 51) Կարապետ Միսերխանեանց. 52) Կարապետ Տէր Յովհաննիսեանց. 53) Յարութիւն Արէգեանց. 54) Խաչատուր Եղիազարեանց. 55) Գրիգոր Գենջեցեանց. 56) Բախիշ Քօչարեանց. իւրաքանչիւրը մի բաժին։

1) Մարդարէ Լազարեանց իւր Ընկերութիւնովը հինգ բաժին։

1) Կարապետ Մալոսեանց հատուցել է առաջին և երկրորդ մասն միոյ բաժնի։

1) Դաւիթ Սարուխանեանց. 2) Սարգիս Բուրջիխանեանց. 3) Յովհաննէս Բալայեանց. սոցա իւրաքանչիւրը հատուցել է երրորդական մասն միոյ բաժնի, ընդամենը 5 մանէթ։

Բոլորի գումարն է $173\frac{2}{3}$ բաժին 521 մանէթ։

Յովհաննէս Միրզաբէկեանց։

7 Փետր. 1870 ամի.

Ի Շամախի։

Լոքոտրոմեան Աբարար Սոտրոյ

Ազգասիրաց առաւելութիւնը մի ազգի մէջ։ Նորա յատկապէս դէպի յառաջադիմութիւն քայլափոխիլը կ'նշանակէ։ Արդ՝ թէ քանի քաղցր էր ինձ լսել միշտ ազգասիրաց ջերմեռանդութեան պտուղներն, որոց յիրաւի անպայման ուրախութեամբ շնորհակալութիւնս պիտի փոխարինէի զրչիս միջոցաւ։

Նոյնպիսեաց թուերու յաւելումը կ'տեսնուի նոր ի նորոյ Նուխւոյ զաւառկաց մէջ. փոքր միջոցաւ յառաջ Նիժու Գալուստ Եիւզբաշին արժանաւոր գործով իւր անունը փայլեցուց ազգի մէջ. և այժմ՝ նորա հետոց և բարեգործութեանց նախանձաւոր կ'հանդիսանան առ Գուր գետով բնակեալ Հաւարիկ գեղջ մերազնէպ ժողովուրդը, նոր մի փառաւոր Եկեղեցւոյ շինութեան ձեռնարկելով կ'փութան յաւարտ հասուցանել, ամենատեսակ ծախսուց դժուարութեան տալով իրանց թիկունքը. և անշուշտ պետք էր մի այդպիսի Աստուածահաճոյ ձեռնարկութեամբ իրենց Հոգևոր պէտքերը ապահով և անվրդով կատարելու Աստուածային Տաճար կանգնել, ըստ որում այս գիւղը Գուր գետին եղերքի մօտ լինելով, բաց ի ուրիշ մեծամեծ նիւթական վնասներ կրելէն՝ տեղական ժողովրդոց և Եկեղեցւոյն որմերոյն անդարմանելի խախտուածներ պատճառուած էր։

Ժողովրդոց գեղեցիկ նպատակին օգնական և օժանդակ կ'գտնուի նոյն գիւղացի մեր սիրելի Աղգային բարեպաշտ Եղիազար Իւղբաշին՝ իւր սեպհական մեծատարած այգատեղին ձրի իւր կատարեալ ջերմեռանդութենէն ստիպուած՝ նուիրեց նոյն Եկեղեցւոյն, որոյ վերայ կ'հիմնուի Եկեղեցին, և սկիզբն կ'առնու շինութեան. թէ և այս ձեռնարկին անյարմար ժամանակումն զադարումն ստա-

ցած է, բայց առաջիկայ գարնան բարեյարմար միջոցին 'ի գլուխ հանելու լոյս կ'տեսնայ թերևս,

Որովհետև Աստուծոյ քաղցր է բարեհամբաւ Ազգասիրական ուրերով միխթար և յորդոր կարգալ Ազգասէր սիրելեաց՝ խրեան թերթերու էջերով, դայս ևս տպագրութեան տալով շնորհ կ'ունենայ Նոցա Ազգասիրական ձեռնարկութիւնը անմահացնել 'ի մխիթարութիւն նոցա ։

Գրիգոր Յովհաննէսեան
Մելիքեան Աղաթամեանց ։

31 Յունվարի 1870 ամի.
ի Քաղաքն Նուխի.

ՄԵՐ ԱԶԳԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

Ցայտնի բան է որ ընկերութեան մը որ և իցէ բարենպատակ ձեռնարկը 'ի սկզբան չունենար ակնկալեալ յաջողութիւնները, և պէսպէս արգելառիթ պատճառները, ինչպէս դրամական պակասութիւնը, ընկերութեան անդամոց իրարու հետ ունեցած անհամաձայնութիւնները, և կամ արտաքին խափանարար հանգամանքները շատ անգամ կուշացընեն ընկերութեան զարգացումը և երբեմն բոլորովին կխանգարեն նորա ամբողջութիւնը. Քիչ չեն աստծիս նման ընկերութիւններ որ կարճ միջոցի մէջ խոպան խանգարուած են. Քանի մի մարդասիրական և ընթերցասիրական ընկերութիւններ այնպիսի անպտուղ հետևանք ունեցած են զանազան հայաբնակ Քաղաքաց մէջ. բայց այսու ամենայնիւ ուրախալի բան է տեսնելը՝ որ հետզհետէ ուսման յարգը ճանաչելով Հայոց նոր սերունդը, ուսումնաբարենպատակ ընկերութեանց օգուտները, միաբան սիրով և համաձայնութեամբ բոլոր ջանքերնին կթափեն այսպիսի ընկերութեանց յարատևութեանը և ազգաշահութեանը. Այո, հայ երիտասարդութիւնը, եթէ ոչ ամենայն տեղ, գոնէ բազմաթիւ հայաբնակ Քաղաքաց մէջ քանի մի տարիէ 'ի վեր լաւ խելամուտ լինելով ազգային իրաւանց և ազգը բարոյապէս կրթելու գիւրին միջոցներուն՝ ձեռնարկած են ազգին պատմութենէն և նորա կեանքէն խիկ ընտրել օգտակար նիւթեր և աչքին առջևը դնելով նախնեաց քաջութիւններն և մեր օրերի բազմաթիւ բարոյական թերութիւնները թէ ընդհանուր մարդկայնութեան և թէ առանձին ընտանեկան կեանքի մէջ, արծարծել շատ տեղ մարած ազգային եռանդը և հաստատել նորա մէջ բուն հայկական պարկեշտ քաղաքավարութիւնը. Եւ այս նպատակին հասնելու համար քանի մի տեղեր ժրաջան գործունէութեամբ հաստատուած են Թատրոնական ընկերութիւններ որոնք թէպէտ առ այժմ հարկ եղածին չափ չեն վայելեր քաղաքացւոց համակրութիւնը, ըստ որում մեր քաղաքացիներուն չորրորդ մասին մէկը հազիւ կհասկանայ թատրախաղութեան օգուտները, բայց յուսալի է որ ընկերութեան հաստատամիտ անդամոց ջանքը հետզհետէ և այս դժուարութեան առաջը կառնէ միմեանց հետ կատարեալ համաձայնութիւն ունենալով և ժողովրդեան ախորժելի կացուցանելով իրենց վերայ առած դերերը.

Ագուլիսի, Երևանայ, Տփխիսու և Նորերս Նոր-Նախիջևանու մէջ հաստատուած թատրոնները արդարև պէտք է խրախուսական պատճառ լինին ուրիշ Հայաբնակ քաղաքաց մէջ, ինչպէս Ալեքսանդրապօլի, Աժտէրխանայ, Քիշնևի, Վաղարշապատի և այլոց (հայաբնակ) քաղաքաց մէջ նոյնպիսի Թատրոնական ընկերութիւններ հաստատուելուն. վասն զի վերջին յիշուած քաղաքներուն մէջ ևս պակաս չեն քանի մի յառաջադէմ և ուսումնասէր երիտասարդներ, որոց նուիրական պարտքն է ըստ իս՝ այս գգալի թատերական Դպրոցը բանալ իրենց քաղաքաց մէջ ևս ժողովրդեան բարոյական և մտաւոր կրթութեանը համար.

Ցաւօք սրտի կպարտաւորիմ ասել՝ թէ վերջիշեալ քաղաքաց մէջ եղած թատրոնախաղութիւնը առ այժմ հաստատուն չէ. և որպէս միշտ, նոյնպէս և այժմ մեր ազգին մէջ տեսնուած եռանդնալից աշխոյժը այս մասին շուտով կմարի կանհետանայ, ինչպէս Տփխիսու մէջ եղած կերևի, նոյնպէս և Ագուլեաց մէջ. Նոր-Նախիջևանու նորահաստատ թատրոնը Արտաքին գործոց Նախարարին թոյլատրութեամբը և Պ. Փասուլևաճանի ջանասիրութեամբը հաստատուելով՝ մեծ յոյսեր կուտայ յապագային եթէ Նոր-Նախիջևանցիք պատահական մէկ քանի անախորժ անցքերէ չվհատելով՝ չխնայեն իրենց ձեռնտուութիւնը այդ բարեմիտ ձեռնարկութեան և լիովին ճանչնան թատերախաղու-